Կարգապահական գործ թիվ ԿԳ-25086

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԱՐՍԵՆ ԲԵՆԻԿԻ ՄԵՍՐՈՊՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարեն Խալաթյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Միքայել Դանիելյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Արսեն Բենիկի Մեսրոպյանի,

քննության առնելով փաստաբան Արսեն Բենիկի Մեսրոպյանին (արտոնագիր՝ թիվ 126) **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Վիկտորիա Հայրապետյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ ***(այսուհետ նաև՝ Պալատ)*** հայտնել է, որ իր իրավունքների պաշտպանության նպատակով 04.09.2024թ. դիմել է փաստաբան Արսեն Մեսրոպյանին և կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր **(այսուհետ նաև՝ Պայմանագիր)**:

Դիմողը հայտնել է, որ Պայմանագրի համաձայն՝ փաստաբանը պարտավորվել է ներկայացնել իր շահերը ՀՀ քննչական կոմիտեում, ՀՀ դատախազությունում, ՀՀ բոլոր դատարաններում, Շենգավիթի շրջանի քննչական բաժնում քննվող քրեական գործի շրջանակներում:

Ըստ Դիմողի՝ ծառայությունների դիմաց վճարել է 300.000 ՀՀ դրամ:

Դիմողը հայտնել է, որ Փաստաբանը ցուցաբերել է անգործություն և ամիսներ շարունակ իր զանգերին և նամակներին չի պատասխանել:

Հաշվի առնելով փաստաբանի դրսևորած վարքագիծը՝ Դիմողը 30.05.2025թ. նամակ է ուղարկել Փաստաբանին՝ Պայմանագրի լուծման և գումարի վերադարձման պահանջով:

Ելնելով վերոգրյալից, Դիմողը խնդրել է Փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ և պարտավորեցնել վերջինիս վերադարձնել վճարված

Թիվ ԿԳ-25086-2-Ա
04.03.2026թ.

գումարները:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ նաև՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը սահմանված ժամկետում ներկայացրել է ապացույցներ:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Արսեն Մեսրոպյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն իր վերաբերյալ ներկայացված դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը որևէ բացատրություն չի ներկայացրել:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 11.11.2025 թվականին Փաստաբանին առաջարկվել է Օրենքի 39.5 հոդվածի 3-րդ և 4-րդ մասերին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանը հայտնել է, որ Դիմողը Հայաստանում չի եղել և իրենց կապը եղել է զանգերով և whatsapp հավելվածի միջոցով նամակագրություններով: Դիմողի գործով իր տեղեկություններով տեղի են ունեցել երկու քննչական գործողություններ՝ դատավորի հարցաքննություն, և հարցում Նոտարական պալատ, որոնց ինքը մասնակցություն չի ունեցել: Փաստաբանը դիմում է ներկայացրել քննիչին, որով խնդրել է իրեն ներգրավել որպես Դիմողի լիազոր ներկայացուցիչ: Դիմումը Փաստաբանը ներկայացրել է Հանձնաժողովին:

Ըստ Փաստաբանի պնդումների՝ իր գործառույթն է եղել հետևել քրեական գործի ընթացքին՝ գործի ընթացքով պայմանավորված՝ ՔԿԱԳ մարմնի փաստաթուղթը վիճարկելու համար վարչական դատարան դիմելու համար: Այլ գործառույթ ինքը չի ունեցել:

Դիմողն իրեն տրամադրել է ընդամենը 100.000 ՀՀ դրամ գումար:

Հավելել է նաև, որ բանավոր կապի մեջ է եղել նաև քննիչի հետ:

Հանձնաժողովին ներկայացրել է Արթուր Արմենակյանի հայտարարությունը, ում միջոցով ծանոթացել է Դիմողի հետ, ինչպես նաև Դիմողի և իր միջև տեղի ունեցած ձայնային հաղորդագրությունների ձայնագրություններ՝ ըստ իր պնդման՝ 2025թ. ապրիլից մինչև 2025թ. մայիս ամսի վերջն ընկած ժամանակահատվածում:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 22.10.2025 թվականի թիվ 303-Ա/ԿԳ-25086 որոշմամբ փաստաբան Արսեն Մեսրոպյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

16.10.2025թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ նաև՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 26.12.2025թ. կազմել է եզրակացություն: Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-ից 7-րդ կետերում նշված փաստերը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 26.12.2025թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել՝ 11.02.2026թ. ժամը 18:30-ին, 04.03.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբան Արսեն Մեսրոպյանը ստանձնել է Վիկտորյա Հայրապետյանի իրավունքների ու շահերի պաշտպանությունը: *Նշված փաստը հաստատվում է 04.10.2024թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրի պատճենով, 04.10.2024թ. լիազորագրի պատճենով, 04.10.2024թ. գործարքի կատարման բանկային քաղվածքի պատճենով, ինչպես նաև սույն փաստը չի վիճարկվել:*

2. Դիմողի կողմից Փաստաբանին վճարվել է 100.000 ՀՀ դրամ գումար: *Սույն փաստը հաստատվում է 04.10.2024թ. գործարքի կատարման բանկային քաղվածքի պատճենով, ինչպես նաև սույն փաստը կրկին չի վիճարկվել:*

3. Փաստաբանը պարտավոր էր ՀՀ քննչական կոմիտե ներկայացված հանցագործության մասին ներկայացված հաղորդման շրջանակներում ներկայացնել և պաշտպանել պատվիրատուի շահերը ՀՀ քննչական կոմիտեում, ՀՀ դատախազությունում, ՀՀ բոլոր դատարաններում և փորձագիտական հիմնարկներում: *Նշված փաստը հաստատվում է Պայմանագրի 1.1 կետով:*

4. Փաստաբանի կողմից չի կատարվել Պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունները: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից որևէ ապացույց չներկայացնելու հիմքով, ինչպես նաև Դիմողի բացատրությամբ:*

5. Փաստաբան Արսեն Մեսրոպյանի և Վիկտորյա Հայրապետյանի միջև 04.09.2025թ. կնքված փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծվել է: *Սույն փաստը հաստատվում է դիմողի բացատրությամբ, ինչպես նաև նամակագրության քաղվածքով:*

6. Փաստաբանը Դիմողին որևէ գումար չի վերադարձրել: *Սույն փաստը հաստատվում է*

կողմերի բացատրությամբ:

7. Փաստաբանը Դիմողին չի տեղեկացրել հանձնարարության կատարման ընթացքի մասին և չի պատասխանել վստահորդին հետաքրքրող հարցերին: *Սույն փաստը հաստատվում է, քանի որ Փաստաբանը չի ներկայացրել հակառակի մասին վկայող որևէ ապացույց:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Արսեն Մեսրոպյանը փաստաբան է հանդիսանում 18.03.1999 թվականից, և 2021-2026թթ ընկած ժամանակահատվածում չի ունեցել կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Արսեն Մեսրոպյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1) ենթակետերի խախտման համար:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության*

ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հետևանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

Տվյալ դեպքում, փաստաբան Արսեն Մեսրոպյանին վերագրում է բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, հանձնարարության կատարման ընթացքի և Դիմողին հետաքրքրող հարցերին չպատասխանելու, ինչպես նաև Պայմանագրի լուծումից հետո գումարը չվերադարձնելու վարքագիծը:

Վերոգրյալի համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցին.

- ***արդյո՞ք փաստաբան Արսեն Մեսրոպյանը բարեխիղճ իրավական օգնություն է ցուցաբերել Դիմողին,***
- ***արդյո՞ք փաստաբան Արսեն Մեսրոպյանը ձեռնարկել է ողջամիտ ջանքեր իր վստահորդի հանձնարարությունն արագ և արդյունավետ կատարելու համար,***
- ***արդյո՞ք փաստաբան Արսեն Մեսրոպյանը հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացրել է Դիմողին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին,***
- ***արդյո՞ք պայմանագիրը լուծելիս փաստաբան Արսեն Մեսրոպյանը վերադարձրել է Դիմողին հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել:***

➢ **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման մասով**

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝*

*1) ազնվորեն և **բարեխղճորեն** պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.*

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին **բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ** իր մասնագիտական կարողությունների սահմաններում, **ինչը ենթադրում է** իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, **հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:***

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, **բարեխղճորեն**, որակավորված, սկզբունքայնորեն և **ժամանակին**, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Համադրելով Օրենքի և Կանոնագրքի նշված ենթակետերը՝ Հանձնաժողովը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխղճության, և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ փաստաբանը պարտավոր է ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը:

Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ կարող են լինել վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

ՄԱԿ-ի 1990թ. **«Փաստաբանների դերին վերաբերող հիմնարար սկզբունքներ»**-ի մասին փաստաթղթի համաձայն, փաստաբանների պարտականությունների մեջ է մտնում, inter alia, **«իրենց վստահորդներին բոլոր պատշաճ միջոցներով օգնելը, և նրանց շահերը պաշտպանելու ուղղությամբ իրավական գործողություններ ձեռնարկելը»** (կետ 13(բ), իսկ իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս ու արդարադատության իրականացմանը աջակցելիս պարտավոր են պաշտպանել ազգային և միջազգային իրավունքով պաշտպանված մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, և պետք է մշտապես գործեն ազատորեն և ջանասիրաբար՝ օրենքի և իրավաբանի մասնագիտության ճանաչված սկզբունքների և էթիկական նորմերի համաձայն (կետ 14):

Սույն գործում առկա ապացույցներից, ինչպես նաև Դիմողի և Փաստաբանի բացատրություններից պարզ է դառնում, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերը ներկայացնելու պարտականությունը դեռևս 2024 թվականի սեպտեմբերից:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավորվել է ներկայացնել և պաշտպանել Դիմողի շահերը ՀՀ քննչական կոմիտեում, ՀՀ դատախազությունում, ՀՀ բոլոր դատարաններում և փորձագիտական հիմնարկներում՝ հանցագործության մասին հաղորդման շրջանակներում:

Այսինքն, Փաստաբանի ստանձնած պարտավորության բնույթը եղել է հստակ, որոշակի և բովանդակային. այն վերաբերվել է ոչ թե ընդամենը խորհրդատվության տրամադրմանը կամ իրավիճակի ընդհանուր դիտարկմանը, այլ կոնկրետ վարույթների շրջանակում վստահորդի շահերի ներկայացմանն ու պաշտպանությանը իրավասու մարմիններում:

Մինչդեռ գործում բացակայում են ապացույցներ, որոնք կհաստատեին, որ Փաստաբանը ձեռնարկել է Պայմանագրով ստանձնած պարտականությունների կատարմանն ուղղված որևէ առարկայական իրավական գործողություն: Մասնավորապես, Փաստաբանի կողմից չեն ներկայացվել ապացույցներ այն մասին, որ նա նախաքննության փուլում ներկայացրել է միջնորդություններ, բողոքներ, դիմումներ, հարցումներ, մասնակցել է քննչական գործողությունների, պահանջել է վարույթն իրականացնող մարմնից կոնկրետ գործողությունների կատարում կամ առնվազն գրավոր կերպով ձևակերպել է վստահորդի շահերի պաշտպանությանն ուղղված իրավական դիրքորոշում: Ավելին, կարգապահական նիստի ընթացքում Փաստաբանի տված բացատրությունից ևս հետևում է, որ վերջինս, փաստացի, սահմանափակվել է քննիչի հետ բանավոր կապով՝ առանց այն իրավական գործիքակազմի կիրառման, որը բխում էր ինչպես Պայմանագրի առարկայից, այնպես էլ փաստաբանի մասնագիտական պարտականություններից: Նման վարքագիծը չի կարող համարվել բավարար և պատշաճ իրավաբանական օգնություն, քանի որ բանավոր շփումը, ինքնին, առանց դրա արդյունքների իրավական ամրագրման կամ վստահորդի շահերի պաշտպանությանն ուղղված կոնկրետ ընթացակարգային քայլերի, չի ապահովում հանձնարարության իրական և արդյունավետ կատարում:

Հանձնաժողովը կարևոր է համարում արձանագրել, որ փաստաբանի մասնագիտական պարտականությունների գնահատման չափանիշը միայն այն չէ, թե արդյոք նա որևէ շփում կամ ներգրավվածություն ունեցել է գործով, այլ այն, թե արդյոք նրա վարքագիծը եղել է օբյեկտիվորեն պիտանի և արդյունավետ վստահորդի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից: Այս առումով ձևական գործողությունների կատարումը, որն ըստ էության չի առաջացնում վստահորդի շահերի պաշտպանության իրական արդյունքի

հասնելու ողջամիտ հնարավորություն, չի կարող դիտարկվել որպես բարեխիղճ և որակյալ իրավաբանական օգնություն:

Հետևաբար, այն պայմաններում, երբ Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի ներկայացման և պաշտպանության պարտականություն մի շարք իրավասու մարմիններում, սակայն չի կատարել այդ պարտավորության բովանդակությունից բխող որևէ իրավական գործողություն, նրա վարքագիծը չի կարող գնահատվել որպես Օրենքի և Կանոնագրքի պահանջներին համապատասխան:

Այս ամենի հաշվառմամբ Հանձնաժողովը գալիս է այն հետևության, որ Փաստաբանը չի ձեռնարկել այն անհրաժեշտ իրավական ու փաստացի միջոցները, որոնք տվյալ իրավիճակում կարող էին ծառայել Դիմողի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը:

Ուստի Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում առկա են Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի պահանջների խախտման հատկանիշներ:

➢ **Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման մասով.**

Կանոնագրքի 3.6.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Կանոնագրքի 3.6.1 ենթակետը հստակ սահմանում է փաստաբանի պարտականությունը կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

Սույն կանոնից բխում է, որ փաստաբանները ոչ միայն կրում են վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու, այլ նաև տրամադրված օգնության կամ գործի ընթացքի մասին վերջիններիս տեղեկացնելու պարտականություն: Ընդ որում, փաստաբանի կողմից հենց այս պարտականության կատարումն է, որ հնարավորություն է տալիս վստահորդներին օրինակ տվյալ գործով փոխել իրենց դիրքորոշումը, մոտեցումները կամ նույնիսկ պահանջը: Վերջապես վստահորդի հարցերին պատասխանելը այն ողջամիտ ակնկալիքն է, որ յուրաքանչյուր վստահորդ ունի իր փաստաբանից:

Նշված պարտականությունն իր բնույթով սերտորեն փոխկապակցված է Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետով սահմանված պահանջների հետ, քանի որ վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին տեղեկացնելու պարտականությունը ենթադրում է, որ փաստաբանը նախ իրականացնում է հանձնարարությունից բխող համապատասխան գործողություններ, ձևավորում է որոշակի ընթացք, և այնուհետև այդ ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ է հաղորդում վստահորդին:

Այլ կերպ, վստահորդին գործի ընթացքի մասին տեղեկացնելը չի հանդիսանում փաստաբանի գործունեությունից ինքնաբավ ու առանձնացված պարտականություն, այլ հանդիսանում է նրա կողմից իրականացվող իրավաբանական օգնության բնական և անհրաժեշտ բաղադրիչը: Հետևաբար, երբ փաստաբանը չի կատարում հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ, նա ոչ միայն չի ապահովում վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը, այլ նաև չի ստեղծում այնպիսի փաստական և իրավական ընթացք, որի մասին կարող էր կանոնավորապես տեղեկացնել

վստահորդին:

Սույն գործով արդեն արձանագրվել է, որ Փաստաբանի կողմից չեն ներկայացվել ապացույցներ առ այն, որ վերջինս կատարել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունների շրջանակում որևէ առարկայական գործողություն՝ ներկայացրել միջնորդություններ, բողոքներ, հարցումներ, մասնակցել քննչական գործողությունների կամ այլ կերպ գործնականում ձեռնարկել վստահորդի շահերի պաշտպանությանն ուղղված միջոցներ: Նման պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի կողմից փաստացի չի ձևավորվել հանձնարարության կատարման այնպիսի ընթացք, որի վերաբերյալ հնարավոր լիներ վստահորդին պարբերաբար և բովանդակային կերպով տեղեկացնել:

Հետևաբար, վերոնշյալ հանգամանքների համակցված գնահատմամբ Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Փաստաբանը չի կատարել նաև Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետով իր վրա դրված պարտականությունը:

Միաժամանակ, Փաստաբանը չի ներկայացրել նաև որևէ ապացույց, որը կհաստատեր, որ վերջինս Դիմողին կանոնավորապես տեղեկացրել է հանձնարարության կատարման ընթացքի մասին կամ պատասխանել է նրան հետաքրքրող հարցերին:

➢ **Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի խախտման մասով.**

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Պայմանագրի 4.3 կետի համաձայն՝ *Պատվիրատուն որևէ պարագայում (ներառյալ՝ Պայմանագիրը միակողմ լուծելիս) իրավունք չունի Կատարողից հետ պահանջել Պայմանագրի 3.1. կետի հիման վրա վճարած գումարները, եթե Կատարողը ծանոթացել է Գործի նյութերին և Պատվիրատուին ներկայացրել Գործի հետագա ընթացքի և հնարավոր արդյունքների վերաբերյալ խորհրդատվություն:*

Սույն գործով կողմերի բացատրությունների հիման վրա Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Դիմողի ու Փաստաբանի համագործակցությունը դադարել է (ըստ էության՝ պայմանագիրը լուծվել է):

Միաժամանակ, Փաստաբանի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց առ այն, որ վերջինս ծանոթացել է գործի նյութերին և Դիմողին ներկայացրել գործի հետագա ընթացքի և հնարավոր արդյունքների վերաբերյալ խորհրդատվություն, ինչպես նախատեսված է Պայմանագրի 4.3-րդ կետով: Ավելին, գործում բացակայում են նաև ապացույցներ այն մասին, որ Փաստաբանը կատարել է Պայմանագրով նախատեսված հանձնարարությունը, որի դիմաց ստացված հոնորարը ենթակա չէր վերադարձման:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը խախտել է Կանոնագրքի 3.8.4 ենթակետի 1-ին պարբերությունը նույնպես:

Անդրադառնալով Փաստաբանի կողմից ներկայացված 24.02.2026թ. միջնորդությանը, հարկ է նշել հետևյալը.

Օրենքի 39.5-րդ հոդվածի համաձայն՝

1. Կարգապահական գործը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի քննարկմանը նախապատրաստում է կարգապահական գործը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի քննարկմանը նախապատրաստելու նպատակով փաստաբանների պալատի աշխատակազմում ձևավորված սպասարկող անձնակազմի (այսուհետ սույն գլխում՝ սպասարկող անձնակազմ) աշխատակիցը:

3. Սպասարկող անձնակազմի աշխատակիցը պարտավոր է հավաքել ապացույցներ՝ կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու համար:

4. Սպասարկող անձնակազմի աշխատակիցն իրավունք ունի փաստաբանից կամ կարգապահական խախտման մասին հաղորդում (դիմում, տեղեկանք, միջնորդություն) ներկայացրած անձից (մարմնից) պահանջելու ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ, որոնք փվյալ անձանց (մարմինների) ազդեցության ոլորտում են կամ պետք է լինեն: Ապացույց ներկայացնելու պահանջը ենթակա է կատարման այն ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում:

5. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում կատարման անհնարինության դեպքում պահանջի հասցեատերը գրավոր դիմում է փաստաբանների պալատի նախագահին՝ հայցելով կատարման նոր ժամկետ կամ հայտնելով որոշման կատարման անհնարինության մասին՝ նշելով անհնարինության պատճառները: Փաստաբանների պալատի նախագահն իր որոշմամբ կարող է սահմանել նոր ժամկետ կամ հարգելի ճանաչել ապացույց չներկայացնելու պատճառները:

6. Սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում պահանջված ապացույցը չներկայացնելու կամ ապացույց ներկայացնելու համար նոր ժամկետ չսահմանելու կամ ապացույցը չներկայացնելու պատճառները հարգելի չճանաչելու դեպքում դա կարող է մեկնաբանվել ի վնաս պահանջի հասցեատիրոջ, եթե ապացուցման ենթակա փաստը, որի վերաբերյալ անհրաժեշտ էր պահանջվող ապացույցը, մնում է չապացուցված:

7. Սպասարկող անձնակազմի աշխատակիցը ապացույցների հավաքման գործընթացն ավարտում և գործը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացնում ողջամիտ ժամկետում, բայց ոչ ուշ, քան գործն ստանալուց հետո՝ երկու ամսվա ընթացքում:

Նշված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ օրենսդիրը ամրագրելով կարգապահական վարույթի կողմերի ապացույց ներկայացնելու իրավունքը, նախատեսել է նաև դրա կիրառման կառուցակարգը: Ըստ այդմ, օրենքը նաև որոշակի պարտականություն է դրել Պալատի աշխատակազմում ձևավորված սպասարկող անձնակազմի համար, որն էլ իրականացնում է անհրաժեշտ ապացույցների հավաքագրումը՝ կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու համար:

Ընդ որում, այն դեպքում, երբ Պալատի աշխատակազմում ձևավորված սպասարկող անձնակազմի կողմից կարգապահական վարույթի կողմերին ներկայացվում է պահանջ ապացույց ներկայացնելու մասին, ապա այն ենթակա է կատարման ստանալու օրվան հաջորդող օրվանից մեկ շաբաթյա ժամկետում: Նկատի ունենալով ապացույց ներկայացնելու անհնարինության առկայությունը, նախատեսվել է նաև հանրավորություն **բացթողնված**

ժամկետը վերականգնելու համար, որի համար կողմը պետք է դիմի **Պալատի նախագահին**՝ հիմնավորելով սահմանված ժամկետում ապացույցի ներկայացման **անհնարինությունը:**

Նախ հարկ է նշել, որ Փաստաբանը չի ներկայացրել *գրավոր դիմում է փաստաբանների պալատի նախագահին՝ հայցելով կատարման նոր ժամկետ կամ հայտնելով որոշման կատարման անհնարինության մասին՝ նշելով անհնարինության պատճառները, որպեսզի ՀՀ փաստաբանների պալատի նախագահը սահմանի նոր ժամկետ կամ հարգելի ճանաչի ապացույց չներկայացնելու պատճառները:*

Այնուամենայնիվ, առաջին հերթին հարկ է նշել, որ Փաստաբանից կարգապահական վարույթի շրջանակներում դեռևս 04.12.2025 թվականին Պալատի աշխատակազմում ձևավորված սպասարկող անձնակազմի աշխատակցի կողմից պահանջվել են տեղեկություններ և ապացույցներ առ այն, որ Փաստաբանը Դիմողին կանոնավորապես տեղեկացրել է հանձնարարության ընթացքի մասին, որի կապակցությամբ Փաստաբանը չի ներկայացրել որևէ դիրքորոշում կամ ապացույց:

24.02.2026թ. միջնորդությամբ Փաստաբանը հանձնաժողովին չի ներկայացրել որևէ հիմնավորում նախկինում միջնորդությանը կից ներկայցված ապացույցները ներկայացնելու անհնարինության վերաբերյալ: Ավելին, ներկայացված միջնորդությունից հետևում է, որ Փաստաբանը ունեցել է հնարավորություն ներկայացնելու ձայնային հաղորդագրությունները ընդհուպ մինչև գործը Պալատի կարգապահական հանձնաժողովի քննարկմանը հանձնելու պահը, սակայն չի իրացրել այդ իրավունքը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ միջնորդությունը ենթակա է մերժման:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ դեպքում առկա է նկատողություն տույժի տեսակը ընտրելու առանձին երկու հիմք:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.*

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) փուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները, ինչից ելնելով նրա նկատմամբ կիրառում է ամենամեղմ՝ «նկատողություն» կարգապահական տույժը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 8-րդ մասի և 39.10.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Արսեն Բենիկի Մեսրոպյանի (արտոնագիր՝ թիվ 126) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «նկատողություն»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1) ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-25086-2-Ա
04 մարտի 2026թ.
ք.Երևան